



ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Մոլորից համար 10 Ժր:
 Տարեկան 5 »
 Արտատպանի համար 12 »
 Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵՐԻ
 —(—
 Գրութիւնք եւ չեւ սրտիր
 —(—
 Ինքնուզան տղր 20 սան-
 քիս Է. երեքին աւելի աւել-
 ցանկերու համար 20 Օլո
 գեղջ կրնայ:

ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalemkarian
 (Austria)
 Melnikaristangasse 14
 Vienne

Նամակ եւ դրամ դրոյս
 Խմբագրութեան հասցին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒՅ՝ ՍՈՒՒՔԻԱՍԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Դոկտոր Փաշայեանը իր նամակով յայտարարում է որ Սալմաստում բացվում է «Կեղ ընդհանրական դպրոց» եւ դպրոցի գործը հաստատ հիմերի վրայ դնելու համար օգնութեան հրաւեր կարդում: Ուրիշ կերպ էլ անկարելի էր: Վերջին տարիներում մտաւոր շարժումը զգալի ծաւալ ստացաւ Պարսկահայերի մէջ: Երկու տեղի էլ անձնուէր, եւ անհոգի դաշտաբարական անհաստներ մտան այդ խոպանացած վայրի մէջ, ամեն ճիգ թափեցին մշակելու ասիական անշարժութեան եւ տգիտութեան մէջ ընկղմված Պարսկահայի սիրտն ու միտքը, կամաց կամաց հիմնարկեցին փոքրիկ ընկերութիւններ, մեծ մասամբ կանանց, որոնց նպատակն էր տարածել արեւստ եւ տարրական ուսում, օգնել չքաւորներին ու հարած վաճառներին:

Կարճ ժամանակի մէջ շնորհիւ եւ անհոգի գործողների, պարսկահայը զարթեց:

Վնասակար հնութիւնը եւ խաւարը չը դիմացան լոյսին. ժողովուրդը յառաջադիմեց եւ այսօր նրա մտաւոր պահանջները այնքան լայնացել են, որ կեդրոնական դպրոցի պէտք է զգացվում: Պարսկահայերը փափագում են ունենալ զիտութեան եւ արեւստի մի օճախ, եւ այդ իզձը իրագործելու է շնորհիւ մի լաւ հոգեւորականի, Սահակ եպիսկոպոս Ալվատեան, եւ նրան աջակցող մաքուր ու զարգացած երիտասարդութեան:

Նատ ուրախ ենք. դպրոցը հիմնվում է շատ յարմար տեղում եւ ժամանակին: Այնտեղ կարող են սովորել ոչ միայն պարսկահայ, այլեւ սահմանակից տաճկահայ ուսումնասիրաւ պատանիները:

Այսօր թէ Ռուսաստանում եւ թէ Տաճկաստանում հայկական դպրոցները ջնջվում են. երկու լիակեր արժիւնեք, մարաղ մըտած, ճգում են եւ ոչնչացնում այն ամենը ինչ որ կարող է հայ

մտաւոր սերնդին մղել դէպի ազատաւիրութիւն եւ հայրենասիրութիւն...

Պարսկաստանը համեմարաբար, զոնէ կրթական տեսակետով, շատ ազատ է եւ հայ պատանին կարող է այնտեղ ազգային ոգով կրթութիւն ստանալ:

Այդ պատճառով էլ ամեն մի հարուստ եւ բարի հայ, եթէ տրամադիր է իր հարստութիւնից բաժին հանել խեղճ հայութեան միտքը եւ սիրտը մշակելու գործին, պարտաւոր է ձեռք մեկնել Սալմաստում հիմնող դպրոցին: Որովհետեւ միայն նիւթապէս ապահով դպրոցը կարող է իր բուն նպատակին ծառայել:

Ժամանակակից Սանասարեանները, եթէ դրանք գոյութիւն ունեն, այսօր թող ապահովեն Սալմաստի դպրոցը, այդ դեռ բաւական չէ, թող այդ տեսակ մի դպրոց էլ հիմնեն Բուլղարիայում:

Բուլղարիայում հիմնված գըզըրոցը ազգային լուսաւորութեան ջան կը լինի տեղացի, բուժանական, աւստրիական եւ տաճկանականների հայերի համար: Եւ այդ տեսակ երկու դպրոցներու ներառել համար այնքան էլ մեծ գումար չէ հարկուոր. Ռուսաստանի եւ արտասահմանի մի քանի հարուստ հայեր զիւրութեամբ կարող են ապահովել թէ Պարսկաստանի եւ թէ Բուլղարիայի կեդրոնական դպրոցները:

Առ այժմ Ռուսաստանի եւ Տաճկաստանի հայ դպրոցներին մեծ գումարներ տալը գրեթէ աննպատակ է. որովհետեւ արժիւնները կը իւրեն: Ահա ինչ դէպքում նուպար փաշան կարող էր իր ազգասիրութիւնը ցոյց տալ: Ի՞նչ են անում նրա միլիոնատէր ժաւանդները...

Թող անմահացնեն ի անց հանձարեղ բայց թոյլ հայրենասէր հօր անունը: Եզրիպտոսում անմահանալը բուժական չէ մի հայի համար:

ԳԵՐԻ՝ ԿԵԼԼԱՄ...

Կայծ մը քուս աշխից հուրեն, Վառեց սիրս, բռնկոցը, Սիրոյի բոցը՝ կասարոհն Լապից հոգիս, մոխրացոց:

Հայ սպայ եւ, քաջահամբաւ, Բանակ մ'ունիմ անձնուոր, Ըսէ՛, կուգե՛ս, սիրոյի արաւ Աշխարհ մը սաւ եւ անուր:

Վարդի սերեւ շուրթից վրայ, Թոյլ տուր զնեւ սաք հաւերոյ, Դերի կ'ըլլաւ, Աստուած վիպ, Զեփիւն շունչից կենսաբոյր:

—Զե՛, հայ սպայ, եւ չեւ պաշտե, Ուսնոցներդ ոսկեհոտ, Իմ հայրենեաց լոռ ու դաշտեր, Սիրտում եւ անուր, հուր:

Ոսկեհոտի այդ համազգես, Օսարի՛ս Է, օսարի՛ն, Փառհեր ունիս, բայց քեզի հե՛ս Պիտի մեռնիլ, պիտ' մարիլ:

Նժոյզ ձիւնդ ոսկի քաւրիլ միայն անուր, արշաւէ՛, Գեւա՛, գոյի՛, հայրոյի իւրիլ Երկունալ զինուոր զուէ՛ գրուէ՛:

Եւ քե շեւ, որ վիրաւոր Հայրց ժայռեր անկեր եւ, Կառնուր թեւեր՝ բիր, բիրաւոր, Կը սրանա՛ւ դիպի քեզ:

Արիւնամոր վերջից վրայ Եւ կը զնեւ սաք հաւերոյ, Դերի՛ կ'ըլլաւ, Աստուած վիպ, Բու դաշտից մահաբոյր:

ՎԷՏԱ

11 Մարտ 1899

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 1/13 Մարտ

Պարսկաստանի միլիտարական շուրթեր Այս անգամ հետեւեալ միլիտարական լուրերը Եւրոպայի ընթերցողներուն հաղորդելով կը բաւականանամ:

1. Դաւրթի Անգլիական հիւպատոսի միջնորդութեամբ Ռէւսամի-նիստրի Դուքը 100 անգլիական ոսկի նուիրեց «Թաւրիզը Հայուն հաց Բարեգործական ընկերութեան»: Այս ընկերութիւնը մինչեւ ցարդ մեծ հոգածութիւն եւ խնամք ցոյց տուած է հայ կարօտանշիններու, սովիայներու եւ դաղթականներու: Ու թը տարի է գոյութիւն ունենայր եւ Դաւրթի մէջ բացած է կարիւնի արհեստանոց, մանկապարտեզ, գորգի գործարան եւ զանազան գիւղերու մէջ դպրոցներ: Ասկէ զատ, աղքատ աշակերտներ

ներու դպրոցական բոլոր պիտոյքները եւ հագուստները կը հոգայ, չքաւոր ընտանիքներու հօգնէ եւ Լիւրվայի դպրոցին տարեկան 2500 ֆր. կը նպաստէ: Դաւրթի մէջ միեւնոյն նպատակով կազմուած է մի ուրիշ Հայուն հաց ընկերութիւն (Ասորպատական անուամբ), որը նոյնպէս կը պահէ Արհեստանոց, Մանկապարտեզ եւ գիւղական մի քանի դպրոցներու կը նպաստէ: Դրամագլխով առաջինը երկրորդէն աւելի հարուստ է եւ գործելու աւելի լայն ապարէզ ընտրած: Ասանկ փոքր քաղաքի մը մէջ միեւնոյն նպատակով երկու ընկերութիւններու գոյութիւնը շատ տխուր երեւոյթ մըն է, երկրորդին ծնունդը կարելի է վերագրել եսական եւ անձնական նեղ մտածումներու: Եսական անձուկ մտքի արդիւնք լինելը բացայայտ է, քանի որ երկուքն ալ ընդգրկած են միեւնոյն նպատակը: Ժամանակ է կարծեմ անձնական հաշիւները մէկ կողմ թողուլ եւ շուտով միանալ: Իրենց միացումով ընդհանուր միութիւն մը յառաջ պիտի բերեն հայ հասարակութեան մէջ, որ այսօր, աւաղ, ընկերութեանց երկու լինելուն պատճառով, ժողովրդին մէջ կը տիրէ ստեղծութիւն, թշնամութիւն, հակառակութիւն եւ կուսակցամոլութիւն:

2. Մարաղայի մէջ կաշիկ վր. Տատեանի քաջալերութեամբ կազմուած է «Հայուն հաց բարեգործական ընկերութիւն» մը, որը առաջին պատեհութեամբ 4600 ֆր. հանգանակած է: Այս նորակազմ ընկերութեան Պ Յակոբ Սալմաստեան 2500 ֆրանք նուիրեց:

3. Մարաղայի մէջ նոր դպրոցի մը շինութեան համար վերոյիշեալ անձնաւորութիւնը նուիրած է նաեւ 2500 ֆրանք:

4. Ասորպատականի թեմակալ առաջնորդ Գեւր. Սահակ եպս. Ալվատեան իր փոխանորդ կաշիկ վր. Տատեանը զաւտները զրկած է ընդհանուր վիճակագրութիւն մը կազմելու եւ տեղական ազգային գործերը կարգադրելու համար, եւ մասնաւանդ ժողովրդեան քուէով երեսփոխաններ ընտրել տալու, որոնք պիտի կազմեն Դաւրթի երեսփոխանական ժողովը: Սրբազան առաջնորդը կը փափաքի սահմանադրութեան նման օրէնք մը հաստատուի: Պարսկահայերը մինչեւ ցարդ ազգային ղեկաւարող օրէնք մը չեն ունեցած:

5. Արաջնորդ Սրբազանին զիմու-մին շնորհիւ Պ. Չանչեանցի միջոցով Մոսկուայէն Պ. Թումանեանց 500 ռուբլ. զրկած է զաղթական որբերու համար:

6. Մոսկուայի եկեղեցիին մէջ Ս. ծննդեան երեկոյին Բազարատ Արե-

4ԱՐԳՈ
 —(—)

դայ վարդապետան պնակ պտտցնելով 670 թվ. հաւաքած եւ զրկած է Առաջնորդին, որ սովեակներու բաժնուի :

7. Վեհ. կաթողիկոսս գրած է Առաջնորդին, որ սովեակներու համար Պաքուէն 4070 թվ. պիտի զրկուի : Պէտք է յիշել, որ վերջին ժամանակներս Ատրպատականի նահանգին մէջ սովը լազմամիւ գոհնը կը պատճառէ, տեղացի աղքատ հայ ժողովուրդը, գաղթականներու սրբեր անմիջական օգնութեան եւ պաշտպանութեան կարօտ են : Օտար միսիօնարներ առիթն են օգտուելով որսեր կը խնին :

8. Սալամատի մէջ Գիւղանսեսիական կնդրոնական վարժարան մը հաստատելու համար, (որուն շինութիւնը սկսուած է) Ռոստովէն բնիկ Սալամատացի Պ. Տէօլէթ Յունանեան 10,000 թվ. նուիրած է : Այս միւսնոյն նպատակի համար մի ուրիշ Սալամատացի հայ վաճառական 1000 թուպլի :

9. Համպուրկէն Պ. Մ. Խիրեան միսիօնարը հայտնեաց բարեգործական ընկերութեան 39 անգլիական անդի, 5 շիւրի եւ 10 բէնի զրկած է Մեծիորդ կարօտեակներու համար :

10. Թէրանի մէջ 2 Պօլսեցի պարոններու Գառնիկ Տալիճեան (ղեկաւոր) եւ Յակոբ Քէլիշեան (վաճառական) նախաձեռնութեամբ եւ աշխատութեամբ ի նպաստ Ատրպատականի սովեակներուն Սինիսօրօկրաֆի եւ Ծօնօկրաֆի ներկայացուած մը սուած են, որոնք 600 փր. հասոյթ մը գոյացած է : Մտադիր են միւսնոյն ներկայացուած միւսնոյն նպատակի համար կրկնել, գործիքներու տէրք՝ Պ. Ճգնաւորեան ձրաբար կատարած է փորձերը :

11. Ամենէն միսիօնարական լուրը կնդրոնական դպրոցի բացումն է : կնդրոնական դպրոց մը ունենալու խնդիրը միջանի տարիներ առաջ յուզուած, ձեռնուած ու վիճարանուած էր. սակայն գործադրութիւնը մեկ անյայտ պատճառներով չէր յաջողուած : Այս անգամ, Այվատեան Սըրբազանին խրատներուն եւ հոգածութեան շնորհիւ կնդրոնական դպրոցի խնդիրը վերջնականապէս յաջողուած է : Վերոյիշեալ «Ռաբրիզու հայտնեաց բարեգործական ընկերութիւնը» նախաձեռնող հանգիստանալով նախնական ծախքերու համար 5000 ֆր. նուիրեց : Մեծ յոյս կայ որ գանազան երկիրներ բնակող ազգայինները իրենց նպաստները չը պիտի

խնայեն Պարսկահայերու կրթական այս կարեւոր ձեռնարկին, ինչպէս նաեւ զթու թեան գործին : Ամէն կերպով քաջախելութեան արժանի են : Մեր ազգային թերթերը եթէ հասին հայ հասարակութեան հրաւեր կարգալ եւ ուշադրութեան հրաւերել, ամենամեծ ծառայութիւնը մատուցած կը լինին : կնդրոնական դպրոցը այս սեպտեմբերին պիտի բացուի, յարասեւութեան համար արտաքին մեծ նպաստներու պէտք կայ : Դրամ կարելի է զրկել հետեւեալ հասցէներով : Monseigneur Sahag Ayyadian, Archevêque Arménien Tauris-(Perse) եւ կամ Madaue Serpouhie Amadounian, Présidente da la Société de bienfaisance des dames Arméniennes de Tauris-(Perse) :

Sofr. 4. Յ. Փաշայեան

Ս. Յրկիւն, 5 Մարտ

Ուրիշ տարիներու պէս այս տարի ալ փետր. 25ին քաղաքին «Բարագարանի Միութեան» 7րդ. տարեգործութեան թատերական շքեղ ներկայացուածով մը, «Կերկայացուած խաղն էր Վահան, Կր բաւական յաջող անցաւ. լաւ տպաւորութիւն ձգեց նոյն իսկ օտարներուն վրայ, եւ բաւական կոկիկ գոյամար մը գոյացաւ, որ նախապէս արուած որոշման համաձայն պիտի զրկուի Զէյթուն : Արդէն գրած եմ ձեզի որ Լուսաւորչական հայերուն պէս յոգնաբախտներն ալ պէտք ունին եկեղեցիի մը : Բողոքականներէն երկու անձնաւորութիւններ փափաք կը յայտնեն լուսաւորչականները, եթէ հնար է երկու կողմի հակառակողները սիրաշահին, եւ միաբանութիւնով մէկ եկեղեցի մը շինեն. ուր իւրաքանչիւրը իր արարողութիւնը կատարէ իր ձեռով : Ասոր համար քանիցս ժողովներ եղան, բայց ապարդիւն :

Բողոքականներէն շատերը ընդդիմացան առարկելով որ իրենք չեն կրնար աւսուան ունեցող, օժնալ տաճարի մը մէջ պաշտօն մատուցանել : Նոյն իսկ միջնորդող երկու անձնաւորութիւններն ալ Պ. Ս. Սէքլեմեան եւ Պ. Կ. Յովհաննէսեան անոնց աչքէն ինկան. որպէս թէ բողոքականներու գրամով լուսաւորչականներու համար եկեղեցի շինել ուզողներ են : Բողոքի բողոքականութեան հիմնադիրները Մտարր Բօրբանդ, որ անցեալ տարի արեւելեան նահանգներէն տեղս բերուեցաւ եւ քարոզիչ

կարգուեցաւ. այս տարի չի յաջողեցաւ վերնարուել : Փետր. 26ին ձեռնարկ քարոզչին կնոջ սօնախմբութիւնը ըլլալով, բողոքականները ժողովարանին մէջ հացկերոյթով մը պատուելու գեղեցիկ գանի : Սակայն իր չընտրուելէն վերադարձած ձեռնարկ քարոզիչը, սեղանէն առաջ խօսք առնելով՝ գայրոյթի խօսքեր կարտասանէ. որով տակնուվրայութիւն մը կը ըլլայ, եւ իւրաքանչիւրը իր սուսը կը քաշուի :

Մեր ցաւը հոն էր որ պատուելիին կնոջ անուշիկ յիշողներէն շատերը մտոցած են Զէյթունը, մտոցած էին Հայաստանի որբերը, եւ չէին բարեհաճած թատերական ներկայացման ներկայ գտնուիլ :

Քաղաքիս մէջ հնաժամութիւնով զբաղող ծրարն էր Արամ Մարգարեան կղբայրները, իրենց անխոհեմութիւնովը գրամազուտներն փճացնելէ զատ բաւական ալ պարտքի տակ կը մտնեն : Աս անել ձեռքէն ելլելու համար իրենց պարտավորուած կրկնակին կրակ կուտան, բայց Ամերիկեան կառավարութիւնը չուտով երեւան բերաւ խարդախութիւնը. եւ երկու եղբայրներն ալ գաստապարտուեցան առաջինը ինք տարի երկրորդը հինգ տարի, եւ անմիջապէս զրկուեցան Սանթօնէթըն Քալիֆոռնիայի կնդրոնական բանտը :

Բ. Ս. Ս.

Ն. ՄԱԿԻ ՄԻՒՆԻՍԻՊԱԿՆԵՐ

Հաճեցէք երկտողս հրատարակել ձեր թերթին մէջ :

«Իրաւունքի 20 թիւին մէջ ինծի դէմ quasi — պատասխան մը կար ու վերին աստիճանի անպատկառ սուտերու ամբողջութիւն մըն էր :

Զգացած արհամարհանքս այնքան ի որունկ է որ չեմ զիջանիր այդքան վրան բաց զրպարտութեանց մի առ մի պատասխանել : Սակայն անձիս դէմ որ եւ է երկդիմութիւն չը սիրելով, կը յայտնեմ թէ՛

Առանց մէկու մը ազդեցութեան ենթարկուած ըլլալու, եմ ինչ որ էի ո՛չ թէ 3—4՝ այլ 30—40 շաբաթ առաջ :

Վահան Շահրիւսան

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒՍԸ

Շեարած գրութեան մէջ նստած եմ սեղանիս առաջ : Դեռ նոր սենեակիցս դուրս եկաւ, մի 30 տարեկան վառնեցի երիտասարդ, առոյգ, հոսովու եւ կարիչ : Նա կարգաց ինձ իւր հայրենիքից ստացած նամակը : Ինչ սովորաբար նամակ էր այն. նկարագրովում էր մի ամբողջ հայ ընտանիքի ջնջումը. իր բոլոր քստմանի մանրամասնութիւններով, մանրամասնութիւններ, գաղանային ոճրագործութեան սարսափ, մահան սարսուռ ազդող պատկերներ, որ սովորական դարձան մեր այս վերջին տարիներին կեանքում :

Նամակը վերջացնելուց յետոյ՝ նա իր կարմրած, արցունքոտ աչքերը

ուղղելով ինձ ստեց.

—Ի՞նչ ընեմ պարոն Սուրեն : Այլ ես ի՞նչու կապրիմ, տեղ մը ցոյց տուէք, երթամ, ուր որ ալ ըլլայ. սիրտս կայրուի, կը միայն. կսկիծ, ցաւ, վրէժ, յուսահատութիւն իրար խառնուած կը ըզկանն զիս : Հայրենիքի, անձնական վրէժի բռնող զգացումը զիս կը մղէ դէպի երկիր, թըշնամու դէմ, անոր քանի ջը կաթիլ արիւնը խմելու համար. կը զգամ որ սիրտս ուրիշ կերպ չը կրնար հանդարտուիլ : Այսուհետեւ կու թիւնս այդ վրէժի մէջ կը կայանայ : Ի՞նչու կը լռեմ Պ. Սուրեն, ի՞նչու չէք պատասխաներ, միթէ ինձի յիմարի տեղ կը գնէք, միթէ ըսածներուս չէք հաւատար :

—Լուում եմ, որովհետեւ քեզ շատ յուզված եմ ահսնում, եւ չեմ կարող տեղ ցոյց տալ. միայն քեզնով, քեզ պէս տասնով բան չի գտնուի : Քեզ պէս հազարաւորներ պէտք է լինեն : Ի՞նչ նշանակութիւն ունի եթէ

միայն դու քո վրէժը լուծեցիր մի թշնամի սպանելով, թշնամին միջօրեաւոր է, եւ նա ամբողջ հայութեան թշնամին է : Ամեն մի հայ այդ վրէժի մէջ մաս ունի :

—Ո՞ր ունենայ, ընդմիջեց նա, ինձի ինչ : Ես մեղաւոր եմ որ ահագին մեծամասնութիւն մը ոչխարի զգացմունքներ եւ ուղեղ ունի : Եթէ միայն ես, կամ ինձի պէս մէկ քանիսը կարեւորութիւն չուներ, բայց ի՞նչու դեռ քանի մը տարի ստաջ հայը մէկ մէկ գորս կեղւոր թշնամուն զմտցը, առանց հաստատ համոզված ըլլալու որ իրեն մի ուրիշը պէտք է յաջորդէ :

—Դորա համար էլ այսօր մի ամբողջ հայ բազմութիւն հայհոյում է այդ առաջին ելնողներին եւ մահացողներին յիշատակը, քարկոծում սկզբնական հայկական բոլոր վերջին գոթախտութիւնները միմիայն նրանց վերագրելով :

—Թողէք, Պ. Սուրեն, միթէ դուք

կր ենթարկուիք առանց ըսածներուն, միթէ կարեւորութիւն կուտաք այդ մեղկ արարածներուն, դուք ժողովրդի հարազատ գաւազներուն ախանջ կախեցէք. վնասուող ու անմիջապէս ժողովուրդն է. անոր հարազատ գաւազներն են որ կուզեն շարունակել սկսուածը : Եւ հիմայ, այս վայրկեանին, երբ ժողովուրդը պիտի իր վրէժը լուծէ, եւ իր նպատակին հասնի, դուք եւ կամ ձեզի նմանները կը թողուի : Ներողութիւն, քիչ մը իրատ ըլլամ. դուք ես կը դատնաք կոռի դաշտէն, ոչ թշնամին ընկճուած, այլ համարիւն վատերէն : Փախուստ կուտաք, եւ այդ ի՞նչով կը տարբերի գաւազանի մը ըրած ստոր քայլին :

Բայց չեմ հաւատար որ դուք իսկապէս այդպէս կը մտածէք, այդ անկարելի է . . .

—Կարող է պատահել, ի՞նչու այդքան մեծ կարծիք ունենայ : Է՛հ, թողնեմք այս խօսակցութիւնը :

համար է որ մինչև հիմայ ալ մեր մէջ, մեր շոշերէն անացած շոկ սովորութիւններ կան, մենք ամենքս ալ Սասունի ու գաւառի հայերու նման հայերէն կը խօսինք մեր տներու մէջ. մենք էլերու (աշխարհներու) հետ խնամութիւն չենք ընէր, մեզմէ շատեր անտունութիւն են (առանց թլպատութեան) մենք օտար շեխեր, մօլլաներ և իմամներ չենք ճանչնար, մեր կարգացողները արայի չեն հասկնար, մեզմէ և և ոչ մէկը աստուծոյ նամակը ներու ձեռը չի գիտեր... մեր սիրական սուրբը էսա Սրբապետ ընրիկն է, ծառայեմ իր զօրաց, և այլն, և այլն, թէ այս նշանաւոր պալլըքցի պատմածն, թէ այս մասին զանազան բանասէր հետազոտողներու քաղած բոլոր տեղեկութիւնները կատարելապէս ճիշդ լինելը կապացուցուի այն անհերքելի փաստով որ Սասունի գէպրեթէն քիչ առաջ ու վերջ՝ թուրք կառավարութեան մասնաւոր հրահանգով ու ծախքով Մուշէն և ուրիշ տեղերէն իսլամութեան մոլորեցողութիւն տարածող խաւարածիտ շէխեր ու կարգացողները այդ կէս-քրդացած յեղբուր մէջ մասնաւոր առաքելութիւն մը կազմելով՝ Մէհմէտի առաջ գողի սիրով, շեքմապէս հրահանգեցին այդ քաջ ժողովուրդն ու իսլամութեան վայրագ յատկանիշը թլպատութիւնի գործ գրին:

Յուլիսի ցնծուն օրերէն մէկն էր, երբ Սասունի ոսկի արեղակը ծաւրոսի խիղախ լեռներու ետեւէն. յուշիկ յուշիկ վեր կելլար իր շողերը սրսկելով այդ ազատ և ահարկու սաարներու ու ձորերու վրայ. սրտոտ Սասունցիի աշխատութեան ժամը կը հնչէր: ու արեւածագի այդ հիանալի քամին, Տալուրիկի կանանչ ու բարձր սարերու կլալկաքաղ իր առնական խրոխ կարկարներով կը թնդացնէր, կաթնահամ արծաթ աղբիւրներու քո-

վեր և կաքաւներու մենամորտի կողք կընէր, բարբիտու անուշ քամիին հետ. շուշան, նունուֆար ու անթառամ ծաղիկի բուրովը թեւաւարած այդ անվեհեր ու ինքնապաշտպան ժողովրդեան մաքուր հոգին ու սիրտը զօրացնելով, տարօրինակ աշխուժով շարժման մէջ կը գնէր զանոնք: Սասունցի հայ կիներ, իր ամուսնոյն գործակից նոյն քան աւելնով ու ահնդով իր արնալան գործերուն կըսկէր, ու հիւրասէր Սասունցիի շէն թոնիբի առատ մուխը բուլան, բուլան երդիքներէն վեր բարձրանալով, այդ ազատ լեռներու սեգ կուրծքերու վրայ խուժը մը ազատ հայ գիւղերու գոյութեան ասպցոյցը կուտար: Մենք կը պատրաստուէինք մէկինիլ այդ սիրական քաւերու երջանիկ ձորէն:

ՆԱՀԱ.-ՊԵՏ
(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

Վեհ կաթողիկոսը՝ համակրելով այն ազգագրական, տեղագրական, և հնախօսական նիւթերուն, զորս կը ժողովէ Երուսաղէմ կաթողիկոսի շնորհաւորութեամբ և կրօնաւորները, որ այդպիսի նիւթեր ժողովն, և նպատեն մեր երկրի անցիալի հետազոտութեան և ներկայ կենցաղավարական սովորոյթներու ուսումնասիրութեան:

—Ֆիլիպէի վերջին գէպրեթու մասին. Ֆիլիպէի «Բլօվտիլ» թերթին հետեւեալը կարտասպէս «Քուրիէ սէ Պալգան»:

«Ամսոյս 14ին Արսէն վարդապետը 3-4 մարդերու հետ միասին կերթայ եկեղեցի, ասոնց կընդիմանան վարդապետին հակաակորդ քանի մը գաղթական հայեր, և չեն ուղեր ներս մըտցընել: Այս պատճառով կուրի բռնուեցան և թեթեւ կերպով

վիրաւորեցին քանի մը մարդիկ: Աստիկանութիւնը միջամտեց, կարգը վերահաստատեց և յանցաւորները յանձնեց դատարանին:

Մեր քաղաքին մէջ խռովութիւններ սկսան անցած տարիէն, վարդապետին գալէն ի վեր: Երբ մնալը մէկ մասը շուղեր մէկ մասը կուղէն:

Պուլկար թերթէն թող օրինակ առնեն այն հայ թերթերը, որոնք ամենէն անպէտք խնդիրներուն մէջ ալ կուսակցութեան մատ կուղեն տեսնել:

—Կ. Պոլսի Կրօն. ժողովը իր վերջին նիստին մէջ. Ֆիլիպէէն ելած նամակներէ և հեռագիրներէ ելելով թերթերը տեղեկանալով, յանցաւոր գտեր է Սարգիս քահանան ալ որ վարդապետին կողմակից ելեր է. և որոշէր է յիշեցնել քահանային ժողովին նախորդ որոշումը, և միւս կողմէ յանձնարարել Արսէն վարդապետի որ շուտով երթայ Երուսաղէմ:

—Այս նիստին մէջ Վառնայի եկեղեցւոյն համար զրկուած ընծայացուն Պ. Գէորգ Ղարիպեանն ալ քննուելով, յարմար դատուեր է, և որոշեր է յանձնարարել Տ. Մերոպ եպիսկոպոսի որպէս զի կիրակի (մարտ 20) քահանայ ձեռնադրէ Մայր եկեղեցւոյ մէջ:

—Աւստին. Խորհուրդը Պուլի թաղային վարժարանաց մէկ վիճակացոյցը հրատարակեր է: Այն ցուցակէն կը տեղեկանանք որ տարւոյս սկիզբը 40 վարժարանաց մէջ կաշակերտան եղեր 1873 մանչ և 1189 աղջիկ, իսկ մանկապարտէզի մէջ 1861: Առուցչաց թիւն է 181, ուսուցչուհիներունը 43. ասոնցմէ զատ 50 հատ ալ դաստիարակուհի:

—Երկրագործական դրամատունը (Թուրքիոյ) որոշած ըլլալով 200,000 զրուշի փոխտուութիւն մը ընել Վանի կարօտ երկրագործներուն, հաղորդուեր է Վանի կուսակալութեան, և խընդիրը իտարէի ժողովին ներկա-

յացուելով որոշուեր է Պիթլիսի կուսակալութեան շրջականերէն ցորեն և այլն առնելով կարօտ ժողովրդեան ցրուել: Եւ ասոր համար յատուկ մասնախումբ մը կազմուեր է:

—Բրօֆ. Գրիգոր Խալաթեանց վերատեսուչ կարգուեր է Մուսկուայի Լազարեան ճեմարանի:

—Երուսաղէմի հայ լուսանկարիչ Պ. Կարապետ Գրիգորեան Գերմանիոյ կայսեր պատուակալ լուսանկարիչ կարգուած է: Գերմանացի լուսանկարիչներ Երուսաղէմի Ս. Պատրիարքին և Վանքին լուսանկարները առնելով Պերլին գրկած են:

—Անգլ. և Ամերիկեան նպաստամատոյց Յանձնաժողովին նախագահը Սրբ Ուրիշմ Հուրթոյ, շրջաբերական մը զրկելով Ամերիկեան որբանոցներու վարիչներուն, փափագ յայտնել է որ գոհացում տրուի Ս. Պատրիարքի պահանջներուն, այսինքն՝ հայ սրբերն ոչ միայն կիրակի օրերը հայոց եկեղեցին զրկուին և առն օրեր խոստովանին ու հաղորդուին, այլև շաբթուան մէջ օր մըն ալ հայոց եկեղեցին զըրկուին՝ հայ եկեղեցւոյ վարդապետութիւնը սորվելու:

—Օրմանեան Պատրիարք կոնգակ մը խմբագրեր է մեր Ս. Հարց դաւանութիւնը պարզող, և ժողովուրդը իր նախնեաց եկեղեցւոյն մէջ անխախտ մնալու յորդորող: Այս կոնգակ պիտի կարգացուի թէ Պուլի թէ գաւառներու եկեղեցիներուն մէջ:

—Քանի մը օր առաջ Պուլիս ձէվահիր Պետէսթէնին մէջ, հրեայ մը արծաթեայ միւռոնի աղանի մը և մաշտոց մը ծախու կը հանէ: Աստիկանութիւնը կասկածելով ձերբակալած է հրեայն, և Պատրիարքարանի տեղեկացուցած է, որպէս զի քննութիւն մը կատարուի թէ մի գուցէ եկեղեցիէ մը գողցուած ըլլայ և աճուրդի հանուած Ս. Անթըր:

—Խարբերդի գերման միսիո-

Այժմ չեմ կարող մի ուրիշ պատասխան տալ. կը մտածեմ, ես անձամբ մի բան չեմ կարող անել, իմ ձեռքում ոչինչ չը կայ: Մի քանի օրից կրկին եկէք ինձ մօտ:

Այս ասելով ես սեղմեցի նրա ձեռքը և նա դուրս գնաց:

Ինչպէս վերը յիշեցի, ես չեարած բոլորովին բնկած վանեցու խօսքերի ծանրութեան տակ՝ չը գիտէի թէ ինչ անեմ:

Յանկարծ դուռս նորից զարկվեց, և իմ հրաւերից յետոյ իսկոյն ներս մտաւ մի բարձրահասակ, խարտեալ մազերով, բաւական ճաշակով, թէեւ համեստ, հազնված օրիորդ:

Ես նրան շատ քիչ էի ճանաչում, այնքան քիչ, որ փողոցում հանդիպած միջոցին, կարող էի չը ճանաչել: Սովորական բարեւժաւուց յետոյ՝ նա նստեց իմ ցոյց տուած ամսուկ վրա, և իր լուրջ ու մութ կապոյտ

աչքերը ուղղեց ճիշդ իմ աչքերի մէջը:

—Էհ, ի՞նչ կայ, օրիորդ, ի՞նչ էք ուզում հարցրի ես:

—Կարելոյ գործի մը համար եկած եմ ձեր քովը, Պ. Սուրէն. խորհուրդ մը կուզեմ հարցնել և ձեր աջակցութիւնը խնդրել:

—Պատրաստ եմ ձեզ ծառայելու օրիորդ, որչափ կարող եմ:

Նա սկսեց սատանվել, սակայն միշտ աշխատելով կարգալ իմ գէմքը իր խորը թափանցող աչքերով:

Վերջապէս ասեց.

—Միայն խնդրեմ չը ծաղրէք լսած եմ որ դուք սարսափելի կերպով կիները կը հեղնէք, երբ նոքա կուզեն մտնալ լուրջ հարցերու և խընդիրներու մէջ:

—Մասամբ ճիշդ է ձեր ասածը օրիորդ, միայն այն տարբերութեամբ, որ հեղնում եմ միայն հեղնութեան արժանի կանանց:

Ասելի լաւ է պարզեցէք ձեր միտքը:

—Իմ ըսելիքս շատ կարճ է:

Ես կուզեմ յեղափոխութեանը օգտակար ըլլալ: Մինչև այժմ շատ քիչ էի հետաքրքրուած. հոս զգացի որ ամեն հայ պարտաւոր է աշխատել: Սակայն չը գիտեմ որչափ կրնամ օգտակար ըլլալ, որչափ իմ մտաւոր և հոգեկան ուժերս համապատասխանեն ատանկ գծուարին գործի մը: Ասոր համար կուզեմ Տաճկաստան երթալ, գործի տեղը, վտանգներու մէջ. այնտեղ փորձելու զիս, համոզուելու թէ ընդունակ պիտի ըլլամ գոնէ զգացածիս քառորդին չափ օգտակար ըլլալու:

Ես ոչ ոքի վրա ծանրութիւն չը պիտի ըլլամ, քիչ ժամանակէ մը վերջը պիտի կրնամ ինքզինքս պահել:

հրապարակ նայում էի այդ ցուրտ, ըստ երևոյթի անզգայ հայ աղջկայ սիրարթնած երեսին, որ բարակ շըրթունքները սեղմած, աչքերը մխիլ էր իմ աչքերի մէջ և իր հարցին

պատասխան սպասելով հանգրծ զգուշացնում էր:

—Չը համարձակուես ծաղրելու իմ նուիրական զգացումները:

Եւ չէի կարող ծաղրել. զիմացս հայ օրիորդ էր, որ առանց աւելորդ յուզումների, կարուկ կերպով յայտնում էր գնալ երկիր գործելու: Մեծ յարգանքով սեղմեցի նրա ձեռքը՝ եւ խոստացայ ամեն կերպ աջակցել:

Նա ուրախացաւ, ամբողջ գէմքը խնդաց. ձեռքս սեղմելով տեսց իր հրաժեշտի ողջոյնը և ասեց:

—Շնորհակալ եմ:

—Օրիորդն էլ դուրս գնաց, և կրկին միացի մենակ. եւ սկսեցի մըտածել. — Չէ, ինչ ուզում են թող ասեն մեր մեղի լավանները. — Յեղափոխութիւնը ժողովրդական է դատնում: Նա չի մեռնի. . .

Այր մարդ և օրիորդ, առանց մասնաւոր քարոզների յեղափոխութեան են դիմում: Եւ դրանք քիչ չեն. . .

նար Հէքը Էյման առաջարկեր է տեղւոյն Ս. Գէորգ վանքին Ազգ. Որբանոցի հոգաբարձութեան որ գերմանական փակեալ որբանոցին սաներէն 30-50 որբեր ընդունուին Ազգ. որբանոցին մէջ, որոնց իւրաքանչիւրին համար միսիոնարը պիտի վճարէ տարեկան վեց վեց ոսկի, երեք տարուան պայմանագրով: Այս որբերը միւսներուն հետ նոր կրթութիւն պիտի ստանան, միայն թէ միսիոնարն իրեն կը վերապահէ ամիսն 1-2 անգամ այցելել որբանոցն և ընդհանուրին քրիստոնէական խրատներ խօսիլ: առանց որ եւէ կրօնային խտրութեան:

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Շուրթանի պալատի բժիշկ և առաջնակարգ վիրաբույժ Էմիլ փաշան դատապարտուեցաւ ցմահ աքսորի, Սուրբանի անձին զէմ դատադրութիւն մը կազմելու նըպատակ ունեցած ըլլալուն համար: Էմիլ փաշան մատնուցն եղբէր է իր կիներ, որ ամուսնալուծութիւն կը պահանջէ:

--Ձէնընկեցութեան ժողովին մասնակցելու համար նշանակուած են հետեւեալ անձերը, արտաքին գործերու գլխաւոր քարտուղար Նուրի պէյը, զօրաբաժնի ժէնէրալ Ապտուլլահ փաշան և ծովապետի օգնական Մէհմէտ փաշան:

—Իսկիւպէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ, որ Սերպիթըքական սահմանի վրայ ընդհարում մը տեղի ունեցեր է սերպ և թուրք զինուորներու միջեւ: սերպերն սպաննած են թուրք տասնապետ մը և զինուոր մը վիրաւորեր են:

Քննութիւն մը սկսուած է:

—Բ. Գուռը պատասխանելով ռուս կառավարութեան զեկուցագրին, որ կը վերաբերի Կովկաս գաղթած հայերուն հայրենիք վերադառնալուն, սկզբունքով կընդունի, միայն կը խնդրէ գաղթականներուն ցանկը, որ ռուսական հաշուի մէջ 10,000 ընտանիք է ցցուցուած, և թուրք տեսակէտով վիճելի է:

Պետութեանց ներկայացուցիչները ժողովեցան խորհրդակցելու այն նկատողութիւններու մասին որ պիտի ընեն թուրք կառավարութեան, քիմիական, ալիւրեզին փոշիներու և վարդային զէնքերու ներմուծելուն դէմ դժուարութիւններ յարուցանելուն համար:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

«Փոսիշէ Յայդուենկ»ի հազորադաժին նայելով ընկերվարական գործաւորներու գործադիր մարմինները որոշած են ընդհանուր գործադուլ մը ընել մայիս

մէկին: Թերթը յոյս կը յայտնէ, որ ընկերվարականներու զեկավար մարմինը, ըմբռնելով առաջնալիք բռնակալական ու ֆրանսիայի հետեւանքները պահպանողականներու կողմէն պիտի ջանայ խանդարել այդ վարդապետ ընդհանուր գործադուլը:

—Անցեալ տարի այնքան դժուարութիւններով կառավարութեան կողմէ ընդունել արուած զինուորական նաւատորմի ծրագիրը իրականացած է. նաեւ շինուած են, բայց... տարի մը չանցած՝ արգէն նորակառոյց նաեւ զանազան մասերն անգործադրելի են դարձած, շնորհիւ Կիլլոմ կայսեր փորձառու և անկաշառ աստիճանաւորներու:

—Այլապէս նահանգէն վերջին շարժումներու մէջ 24 օտարականներ գուրս են աքսորուեր: Կամայականութեան այդ զոհերու մէջ կան 8 ֆրանսացի, 6 Ղուկացի (որոնցմէ 3ը կիւն), 3 իտալացի, 2 աւստրիացի, 1 ռուս և մէկ հոլանտացի:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

1899—1900 թուականի ֆրանսական պետական հաշուեկշռի մէջ, մարտ 16ի նիստին ձայներու մեծամասնութեամբ ընդունուեցաւ կառավարութեան առաջարկը: «4,000,000 ֆրանք յատկացնել դպրոցական շէնքեր կառուցանելու համար»:

Կը մնայ ուրեմն, որ պատգամաւորական ժողովին ընդունած այս օրէնքը ընդունուի նաեւ ծերակոյտին կողմէն, որ դրական օրէնքի մը ոյժը ստանայ ու գործադրուի:

Ա Ի Մ Տ Ր Ի Ա

Աւստրիոյ կողմէն զէնընկեցութեան ժողովին պիտի մասնակցի կոմս Վելսի Շայմպը, ունենալով իբր երկրորդ լիազօր Տիար Օգոլիչանին, որ այժմ Աւստրիոյ դեսպանն է Լա-Հէյի մէջ:

Ձ Ե Ն Ը Ն Կ Ե Յ Ո Ւ Ի Ի Ի Ն

Պրիւքսէլի Փըթի-Պլէօ թերթը կը յայտարարէ որ մաս մը տնիշխանականներ Ամստերտամի մէջ մեծ միթինկ մը պիտի սարքեն զէնընկեցութեան ժողովին ժամանակ: Պիտի հրաւիրուին օտար անիշխանականներ ալ, յատկապէս Սէպտիմիէն-Ֆոռը, ապացուցանելու զէնընկեցութեան և մնայուն զօրքերը վերցնելուն օգուտները: Այս նպատակով միթինկ պիտի կազմեն նաեւ անկախ ընկերվարականները, որոն պիտի մասնակցին Տօմիլա Նիօվէնհիւս և Տօքթ. Պօնլէր:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Սօֆիայի մէջ մարտ 17ին Պուկար նախարարները, Արեւելեան երկաթուղեաց ներկայացուցիչներուն հետ ստորագրեցին պայ-

մանագիր մը, որով պուկար կառավարութիւնը կը հրաժարի շինել Թիլիպէ-Չիրպան, Սարամպէյ և Ենի-Չաղրա զուգահեռական գիծերը, ատոր փոխարէն կառավարութիւնը կը ստանայ շահին 0/0 ին 45ը, եթէ ամէն քիլոմէթրի եկամուտը անցնի 10,000 ֆրանքը: Ընկերութիւնը կը պարտաւորի ներկայ տուրքը պակասեցնել, յետոյ 35 0/0 զեղչ ընել Պուկարիոյ մէջ նոր սկսուող արուեստներու մեքենաներուն համար:

Պուկար կառավարութիւնը ընդունած է այդ պայմանները, միայն պայմանով մը, այն է եթէ երեսփոխանական ժողովը վաւերացունէ այդ նոր փոխառութիւնը:

Խ Ս Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Երիտասարդ Իտալացի գիտնական Մարիօնի հնարած «անթել հեռագրի» քանի մը խիստ շահագրգիռ փորձեր կատարուեցան Բա-աը-Գալէի ֆրանսական անդլիական օփերուն միջեւ, 60 քիլոմէթրաչափ տարածութեան մը վրայ: Փորձերը խիստ յաջող ելք ունեցան:

—Կիպրոսի ազգաբնակչութեան մէջ խլրտում մը կը տիրէ: Եկած է անգլիական յանձնախումբ մը, որ «Պրիտիշ մուզէնում»ի կողմէն պաշտօն ունի պեղումներ ընելու հոն, և գտնուած հնութիւնները տեղափոխելու Լօնտրա: Ասիկա առաջին անգամը չէ որ անգլիացիները կը կողպտեն կղզւոյն հնութիւնները և կը տանին Լօնտրա:

Այս անգամ կիպրոսցիները լրջօրէն պատրաստուած են շթողնելու հնութիւններ երկրէն դուրս հանելու: անոնք կուզեն իրենց հնութիւնները իրենց երկրի թանգարանին մէջ պահել:

—Նշանաւորուող Սվէ Հէտին կոպի անապատին (միջին Ասիա) մէջ գտած է մեծ քաղաքի մը հետքերը ծածկուած աւազի տակ: Յաջողած են քանի մը տուներ ազատել աւազի տակէն, ասոնց պատերը զարդարուած են նկարներով, որոնք կը ներկայացնեն զանազան տեսարաններ ընտանական կեանքէ: Քաղաքին բոլոր տիքը կը գտնուին այդինքն և մեծ անտառ մը, բոլորովին աւազով ծածկուած: Կը կարծուի թէ քաղաքը աւազի տակ մնացեր է 1500 տարի առաջ:

—Իուրքիոյ պատերազմական պատրաստութիւնները խօսքէն գործի կանցնին: 4—5 օր առաջ Իւսկուպ հասան 30 վահոն Մուզլէր հրացաններ: Ճամբորդները կը պատմեն թէ Վելս-Բալանկայի ճամբան, ինչպէս և Կուսմանօլ Պուկարական սահմանադրութիւնը հրացաններով փամփուշտներով և այլ պաշարով լի սայլերով բռնուած են:

—(—)

ՆՈՐ ԴԵՂԱՐԱՆ
Ս Տ Ե Յ Ա Ն Պ Օ Ր Ա Ճ Ի Է Յ Ի
«Ձար Պօրիս» փողոցը Գ. Սօթիւրօֆի տան ներքեւի խանութին մէջ: Դեղերը թարմ են. պատրաստութիւնը արագ: Կը փնտռէ նաեւ օգնական մը և աշակերտ մը: 3-3

Ա Ջ Դ
Հայ հասուն երիտասարդ մը որ գիտէ հաշուապահութիւն ծանօթ է տաճկերէն և զաղղիերէն գրականութեան, կուզէ պաշտօն ստանալ վաճառատան մը մէջ զիւրամատչելի վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ: Դիմել խմբագրութեանս: 10-10

ՍԻՆԱՐԻ ԹՈՒՂԹ
Տիար Տիգրան Տուճանեան կը ծանուցանէ թէ ի Փ. Պոլիս Գուրուս խանի դիմաց, կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զեղնալ գիւնրով մեծաքանակ և փոքրաքանակ: Բարեգործութիւնը և շահը կը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն: Կան նաեւ Պօն, Վօլթօ և ուրիշ ամէն տեսակ թուղթեր: Յանձնարարութիւնք կը կատարուին ճրջախ և փութով: 10-10

Պ Օ Ր Ա
Վառճա 24 Մարտ
ՊՈՒՂՏԱՅ
Վահօն, լիպրա 55-58, հէքթօլ 8.80-9.30 ֆրանք
Արապա, լիպրա 55-60 հէքթօլ 9-11.20 ֆրանք
ԱՐԲԱ
Լիպրա 42-50 հէքթօլ 6.10-6.40 ֆրանք
ՄԻՍԻՐ
Վահօն, 55-57 լիպրա, 6-6.05
Առապա, 55-60 լիպրա, 6-6.20
Կիւնկէ 15-20 վահօն, 25-30 առապա կէլմէքաէ տիր:
ՏԱՐԸ
Կիւնկէ 1/2 արապա կէլմէքաէ տիր 58-60 լիպրա, 5.40-5.80 ֆրանք
Առապա մուամէլէսի Նարօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՏԱՐԺՈՒՄ»Ի
Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոման, նամակագրութիւն, հարաւանկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաեւ պրօշիւռներ:
Գիւնըն յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՎԱՐԴՈ
ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ)
)(Գիւն 1 Ֆրանք)(
Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառճաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն Կոչի մօտ, Թուսուզք: Հայկ Մալխեանի սրճարանը:

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ
Печатница „Взаимность“ Варна